ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՎՃՌԱԿԱՆ Է. ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՆԱԽԱԳԾՈՎ ԻՐԵՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՈՐԵՎԷ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

10.10.2013 13:27

Իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և փաստաբանական գործունեություն իրականացնելու համար համապատասխան արտոնագիր ունենալն Արդարադատության նախարարության կողմից մշակված օրենքի նոր նախագծի չափանիշներով դեռ բավարար չէ որպես փաստաբան հանդես գալու համար: Դրա համար անհրաժեշտ է նաև օրենքով սահմանված կարգով հաշվառվել փաստաբանների պետական գրանցամատյանում:

Հայաստանի փաստաբաններն այսօր իրենց բողոքի ձայնն են բարձրացրել ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Փաստաբանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի համար:

Կառավարությունն այդ նախագծերով նախատեսել է փաստաբանների պետական գրանցամատյանը վարելու նոր ընթացակարգ և այդ լիազորությունը վերապահվել է ՀՀ արդարադատության նախարարությանը:

Խնդիրն այն է, որ ՀՀ փաստաբանների պալատի կողմից արտոնագրված փաստաբանին փաստաբանների պետական գրանցամատյանում մեկ տարի ժամկետով հաշվառելու համար նախատեսվել է գանձել տարեկան պետական տուրք՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Հատկանշական է, որ այս պահի դրությամբ փաստաբանների հաշվառումն իրականացնում է ՀՀ փաստաբանների պալատը: Ընդ որում, դա կատարում է անվճար:

«Հետաքրքիր հակասություն կա. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում է, որ պետական տուրք վճարում է պետական մարմնի ծառայություններից օգտվող անձը: Արդյո՞ք գրանցամատյան վարելով՝ փաստաբանն օգտվում է պետական մարմնի ծառայությունից: Ընդ որում, նախագծի մեջ շատ հետաքրքիր ձևով բացահայտվել է այդ «ծառայության» շահառուն, գրված է՝ պետական մարմիններն ու հասարակությունը: Այսինքն՝ ստացվում է, որ այդ գրանցամատյանը վարվում է, որպեսզի դրանից օգտվեն պետական մարմնիններն

ու հասարակությունը փաստաբանի մասին տեղեկություն ստանալու համար: Ու այստեղ պետական տուրքի գաղափարախոսությունը խախտվում է. այդ դեպքում ինչո՞ւ պետք է վճարի փաստաբանը, փաստաբանը ո՞ր ծառայությունից է օգտվում,-իր ելույթում նշեց ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի օրենսդրական բարեփոխումների հարցերով փորձագետ Սոնա Հարությունյանը հայտնեց, որ ՀԵԻԱ-ն ևս դեմ է օրենքի նախագծին և իր ակտիվ մասնակցությունն է ունենալու նախագիծը շրջանառությունից հանելու գործում:

Օրենքի նախագծով՝ գրանցամատյանում հաշվառման նպատակն է փաստաբանների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, մշակման և տրամադրման միջոցով նպաստել՝

1) օրինականության ապահովմանը և յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացմանը.
2) փաստաբանների հետ իրավահարաբերությունների մեջ գտնվող անձանց իրավունքների և շահերի պաշտպանվածությանը:

Անդրադառնալով նախագծի վերոհիշյալ հոդվածին՝ փաստաբան Արտակ Գարոյանն ասաց. «8 տարի գործում է ՀՀ փաստաբանների պալատը: Կուզենայի, որ Արդարադատության նախարարության ներկայացուցիչները հստակ պատասխան տան, թե ռեգիստրի բացակայությամբ քանի դեպք կա, երբ խախտվել է օրինականությունը և փաստաբանների հետ իրավահարաբերություններում մեր շահառուները պաշտպանված չեն եղել»:

Վերջինիս խոսքով՝ նախագծով Արդարադատության նախարարությունը ցանկություն ունի աղճատելու Փաստաբանների պալատի անդամների միասնությունը:

Օրենքի նախագծով՝ փաստաբանների պետական գրանցամատյանի վարման և համակարգման աշխատանքներն իրականացնելու է ՀՀ արդարադատության նախարարությունը, իսկ գրանցամատյանում հաշվառման, հաշվառումից հանելու և հաշվառման տվյալներում փոփոխություն կատարելու աշխատանքները իրականացնելու է ՀՀ փաստաբանների պալատը:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը պաշտոնապես հայտարարեց, որ

նախագծով Փաստաբանների պալատին վերագրվող որևէ գործառույթ պալատը չի իրականացնելու և պայքարելու են նախագծի դեմ՝ մինչև այն հետ կանչվի:

Օրենքի նախագծում նախատեսվող փաստաբաններից գանձման ենթակա պետական տուրքի գումարները նախատեսվում է ուղղել հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման, փաստաբանների պետական գրանցամատյանի տեխնիկական սպասարկման և շահագործման ծախսերի համար:

Նշենք, որ միջոցառմանն Արդարադատության նախարարության ներկայացուցիչները չէին եկել. «մեղադրյալի» աթոռը դատարկ մնաց:

Նունե Հովսեփյան
Իրավաբան.net

Աղբյուրը՝
http://iravaban.net/2013/10/10/%D6%83%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%AC%D5%A1%D5%BF%D5%A8-%D5%BE%D5%B3%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A--%D5%AD%D5%B6%D5%A4%D6%80%D5%A1%D5%B0/

Նախորդ նորությունը: ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է, ԲԱՅՑ ԵՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ԹԱՆԿ ԵՆ ...

Հաջորդ նորությունը: ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ «ՍՊԱՌՆՈՒՄ» Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԵՏ ՉԿԱՆՉԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Առաջարկվող նորություններ

24.10.2013«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՄՈԿԿ

24.10.2013 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՑ ԽԼՈՒՄ ԵՆ 82 ՄԻԼԻՈՆ



24.10.2013ԸՆԴԵՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈՒՐՔԻ

ՆԱԽԱԳԱՀ
Է.ՄԱՆԵՎԻԴԻՍԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ
Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

16.10.2013ՀԱՆԴԻՊՈՒՄ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })